ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ
2023 թ.
№ 15 (1113)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

101 տարի առաջ՝ **1922** թվականի նոյեմբերի **7**-ին, հիմնադրվել է Մանկավարժականը: **1972** թվականին, **50**-ամյակի առթիվ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը ՍՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով՝ «Ուսուցչական կադրերի պատրաստման և մանկավարժական գիտության զարգացման գործում չեռք բերած մեծ հաջողությունների համար»:
1948 թվականին, Խաչատուր Աբովյանի անհայտացման կապակցությամբ, բուհն անվանակոչվել է Խաչատուր Աբովյանի անունով:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները»

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում նոյեմբերի 10-11-ը անցկացվեց «Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով: Այն կազմակերպվել էր Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի համատեղ նախաձեռնությամբ և նվիրված էր Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի 1-ամյակին:

Գիտաժողովի զեկուցումները հիմնականում վերաբերում էին հանրակրթության և հիմնախնդիրներին և զարգացման միտումներին, բուհական մանկավարժության հիմնախնդիրներին և զարգացման միտումներին, մասնավոր մեթոդիկաների դասավանդման առանձնահատկություններին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

«Խորագիրը բավականաչափ ընդգրկուն է և հստակ արտահայտում է բոլոր մտահոգությունները, մարտահրավերներն ու մտորումները, որոնք առկա են այսօր Հայաստանի Հանրապետությունում և համայն աշխարհում՝ կրթության ճգնաժամի հետևանքով առաջացած, դպրոցական, նախադպրոցական և առհասարակ կրթության ոլորտի սուբյեկտով պայմանավորված»:

Ռեկտորն իր գոհունակությունն արտահայտեց ԵՊՀ-ում վերջերս հոգեբանության հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովի կազմակերպման և մի շարք կարևոր հիմնախնդիրների անդրադառնալու առիթով:

Ս. Գևորգյանն անդրադարձավ մանկավարժահոգեբանական մի շարք հիմնախնդիրների՝ ընդգծելով մանկավարժության ոլորտի մերօրյա հիմնախնդիրները, որոնք հանգեցրել են ճգնաժամի: Այդ համատեքստում նա նշեց՝ երկու հիմնական սուբյեկտի հետ գործ ունենք՝ մանկության և ուսուցչի, որոնք կրթության ճգնաժամի հետևանքով հայտնվել են միմյանցից հեռու տարածքներում: Բոլոր նորարարությունները՝ միտված ուսուցչական համակազմի կարիքների բարելավմանը և նրա գործունեության արդյունավետությանը, պարզ դարձրին, որ ուսուցիչների մոտ կան սոցիալական վախեր,

որոնք նրան հնարավորություն չեն տալիս ամբողջովին ներառվելու վերապատրաստման գործընթացի մեջ: Հետազոտություններից պարզ է դառնում, որ դա խնդիր է նաև ողջ աշխարհում:

Հոգեբանական նորագոյությունները պայմանավորված են հոգեֆիզիոլոգիական նոր օրինաչափությունների պարտադիր իմացմամբ, որին մենք չենք տիրապետում:

Պետք է հասկանալ՝ որոնք են այն վախերը, որի արդյունքում մեծերը երեխաներին դուրս են թողել իրենց պատասխանատվության տիրույթից, վերջիններս էլ ինքնուրույն զարգանում են վիրտուալ տարածքում: Մանկավարժական համալսարանում կազմակերպված գիտաժողովում հայտնի ռուս հոգեբան Ասմոլովն ասաց, որ այսօր աշխարհում, ընդհանրապես բոլոր տիրույթներում, առկա է ըմբռնման, վստահության և իմաստի դիֆիցիտը: Եթե մենք չենք կարողանում լրացնել կրթության արդյունավետությանն ուղղված մեր ջանքերը՝ մենք փաստացի չենք ճանաչում այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել ֆիզիոլոգիական մակարդակում: Այսօր ուշադրության դիֆիցիտը բերել է օպերատիվ հիշողության մակարդակում մտապահելու խնդիր, որովհետև այդ ամբողջ ինֆորմացիան վիրտուալ աշխարհում է:

Ռեկտորն ընդգծեց՝ ժամանակն է ժամանակակից երեխային ճանաչել և դրա համար պետք է հատուկ մեթոդիկա մինչդեռ մենք շարունակում ենք սովորել և սովորեցնել այն տեսությունների և օրինաչափությունների հիման վրա, որը կիրառելի չեն ժամանակակից երեխայի նկատմամբ:

Դիմելով Ակադեմիայի իր գործընկերներին՝ Սրբուհի Գևորգյանը կրկին փաստեց, որ քանի դեռ կա ուսուցչի գործունեության ճգնաժամը, չենք կարող խոսել երեխայի սոցիալական զարգացման մասին:

Ինչպիսի արժեքաբանություն ենք մենք ձևավորում… Եվ քանի դեռ չունենք հասարակության արժեքաբանության հստակ գնահատում, չենք կարող շարունակել մեր գործունեությունը:

Ռեկտորը միաժամանակ հավելեց, որ վիրտուալ աշխարհի կազմակերպման թիվ մեկ երկիրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, աշխարհին տալով տեխնոլոգիզացիայի զարգացման հնարավորությունները, այնուամենայնիվ, իր էլիտար դպրոցներում պահպանում է կավճի, գրչի, մանր մոտորիկայի զարգացման հստակ հնարավորությունները, միևնույն ժամանակ աշխարհին տալիս է այն օրինաչափ փոխներգործման հնարավորությունները, որոնք, օրինակ ԱՄՆ-ում ենթադրում է տեխնոլոգիզացիայի զարգացման որոշակի գործընթաց:

Սրբուհի Գևորգյանը թվերի վիճակագրությամբ ներկայացրեց՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվաքանակն անընդհատ աճում է, ինչը մտահոգող է և գործնական քայլեր է պահանջում:

Մենք պարբերաբար քննարկումներ ենք կազմակերպում, որովհետև դիսկուրսն է միայն, որ պայմանավորում է որոշակի գիտելիքի դուրսբերումը, ժամանակակից աշխարհում դա շատ հրատապ է և անհրաժեշտ:

Ելույթ ունեցավ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր, տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ակադեմիայի անդամ Էդվարդ Սանդոյանը: Նա խոսեց սերունդների երկխոսության բացակայության մասին, նաև ընդգծեց՝ կարողություններ ունենք, բայց նաև դրանք ուղղորդելու խնդիր:

Խոսելով ֆինանսավորմամբ պայմանավորված առաջնահերթությունների մասին՝ նա փաստեց՝ կրթության ոլորտն այդ առումով առաջնահերթություն չէ:

Է. Սանդոյանը խոսեց նոր հասարակության հետ նախկին սերնդի դիսոնանսի, կրթության մակարդակի և կենսամակարդակի միջև անջրպետի մասին՝ ընդգծելով, որ ամենակարևորը թվային աշխարհը չէ: Այն երկրներում, որտեղ կրթական մակարդակը բարձր է, բարձր է նաև մարդկանց կենսամակարդակը: Պետք է նախապատվությունը տալ երկարաժամկետ ծրագրերին՝ արդյունքի հասնելու համար:

«Մեր հասարակության գերխնդիրը մանկավարժական հիմնախնդիրների մեջ է, մնացածը ածանցյալ են»,-ամփոփեց ռեկտորը:

Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի ռեկտոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Ալեքսեյ Լուբկովի ուղերձն ընթերցեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Ա. Լուբկովը կարևորեց Ակադեմիայի գործունեությունը և հույս հայտնեց, որ Ակադեմիան կստեղծի մշակութային երկխոսության անհրաժեշտ հարթակ, որը կարևոր դեր կխաղա կրթության և կրթական համապատասխան ծրագրերի զարգացման գործում՝ հանրության պահանջմունքները բավարարելու պատասխանատվությամբ:

Ներկաներն առցանց լսեցին Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի նախագահ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պոֆեսոր, Ռուսաստանի կրթության ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի ➤2

Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցողական առարկան, ամենակենդանի օրինակը աշակերտի համար հենց ինքը ուսուցիչն է:

Ադոլֆ Դիստերվեգ

Հանրապետական գիտաժողով՝ նվիրված հայագիտության հարցերին և միջմշակութային հաղորդակցմանը

Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 15-ին անցկացվեց հերթական հանրապետական գիտաժողովը՝ նվիրված հայագիտության հարցերին և միջմշակութային հաղորդակցմանը: Օրակարգը հագեցած էր հետաքրքիր զեկուցումներով, որոնք ներկայացնում էին ոչ միայն Մանկավարժական համալսարանի, այլև հանրապետության տարբեր բուհերի մասնագետները:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, ով ընդգծեց ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ակտիվ գործունեությունը և նրա ստեղծած հերթական հարթակը, որն իր շուրջն է միավորել ոչ միայն հայագիտության և միջմշակութային հաղորդակցման հարցերով զբաղվող հայագետներին, լեզվաբանության ոլորտի մասնագետներին, այլև պատմաբաններին:

Հղում անելով հայտնիներին՝ Սրբուհի Գևորգյանը փաստեց, որ «մեր ամենաշքեղ պահանջմունքներից մեկը հաղորդակցման պահանջմունքն է, որի բավարարումը գիտակցությունների փոխներգործությունն է», և ներկա հարթակն էլ այդ մակարդակում կբավարարի այս լսարանի մասնաիտական սպասումները:

Ռեկտորը նկատեց՝ խոսելով առանձին լեզվի հարցերի մասին՝ բարձրացվում են լոկալ հարցեր, որոնք կարևոր են մեր հասարակության և արժեքների պահպանման համար, միաժամանակ անդրադարձ արեց գլոբալիզացիայի և լոկալիզացիայի խաչմերուկին՝ այդ համատեքստում ուրախալի փաստ համարելով այն, որ հայագիտությունից զատ, որպես առանձին ճյուղ, ներկայացված է միջմշակութային հաղորդակցումը:

Սրբուհի Գևորգյանը հույս հայտնեց. «Միգուցե այս նեղ երկխոսության հարթակում մենք ունենանք հետաքրքիր մոտեցումներ, որոնք պայմանավորում են միջմշակութային հաղորդակցման զարգացման՝ ժամանակակից աշխարհում շատ արդի որոշակի տեսությունները, որոնք էլ կազմում են սոցիալական հոգեբանության կարևորագույն հայեցակետերը ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական և ռուսական պարադիգմերում»:

Նիստը վարող Լալիկ Խաչատրյանը նկատեց՝ ձեր բոլորի ներկայությունը հարգանք է գիտության նկատմամբ, հարգանք է միմյանց նկատմամբ, հարգանք է մտավորականի նկատմամբ, որովհետև բոլորս գիտենք՝ կա ներքին խանդ, մտավորականների երկփեղկում, ոչ միասնական դաշտում հանդես գալու ներքին կարողություն: Այսօր մենք միասնական ենք, միասնական ենք, որովհետև ուժեղ ենք:

Լիագումար նիստում ողջույնի խոսք ասաց Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր, դոցենտ Դավիթ Գյուրջինյանը, ով փաստեց՝ մեկ անգամ չէ, որ հավաքվում են այս հարթակում՝ լեզվաբանական հարցերի քննարկման շուրջ: Նա ուրախությամբ նշեց, որ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանից կլինի 4 զեկուցում, և որ այդ համալսարանում միջմշակութային հաղորդակցումը առանձին մասնագիտություն է: Դ. Գյուրջինյանը նկատեց՝ երկու համալսարաններին նախ և առաջ միավորում են գիտությունն ու հայագիտությունը:

Լիագումար նիստում զեկուցումներով հանդես եկան «Անանիա Շիրակացի» համալսարանի ռեկտոր, բ.գ.դ., պրոֆեսոր Վաղարշակ Մադոյանը և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր, բ.գ.թ., դոցենտ Դավիթ Գյուրջինյանը:

Վաղարշակ Մադոյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ լեզուների համեմատական մի շարք առանձնահատկությունների: Զեկուցողը համեմատությունների համատեքստում հիմնականում անդրադարձավ բառերի իմաստային նշանակությանն ու փոփոխություններին:

Դոցենտ Դավիթ Գյուրջինյանը խոսեց Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում օգտագործած լեզվանուններ ի մասին: Նախ ընդգծեց, ինչպես նշում են մասնագետները, գիրքը պատմագիտական, աղբյուրագիտական, գեղարվեստական արժեք է, որը գրավում է նաև լեզվաբաններին:

Զեկուցողը հանգամանորեն խոսեց 5-րդ դարի պատմիչի «Պատմության» մեջ գործածված լեզվանունների մասին՝ մասնավորապես՝ Խորենացին երբ է դրանք գործածել, մինչև 5-րդ դարն արդյոք գործածվել են այդ լեզվանունները, հետագայում գործածության ինչ ընթացք է ունեցել՝ կանգ առնելով «Հայոց լեզու», «հայերեն», «հայ լեզու», «հայ բան», «հայկական լեզու» բառերի ու բառակապակցությունների գործածությունների վրա: Ընդգծեց նաև, որ պատմաբանը որոշ բառեր գործածել է հայոց տարածքները մատնանշելիս, օգտագործելով հարևան ժողովուրդների լեզվանուններ:

Առաջին մասնախմբում զեկուցումներ ներկայացրին Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Կարինե Աբրահամյանը, ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Փիլիպոսյանը, բ.գ.թ., դոցենտ Հովհաննես Զաքարյանը («Տաթև» գիտակրթական համալիր), ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ.գ. թ., դոցենտ Էդիկ Գևորգյանը, ՀՊՄՀ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Մարգուշ Միրումյանը, նույն ամբիոնի դոցենտ Սիրարփի Խաչատրյանը, Մխ. Հերացու անվան ԵՊԲՀ դոցենտ Հենրիետա Սուքիասյանը:

Երկրորդ մասնախմբի զեկուցողներն էին պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը, բ.գ.թ. Հռիփսիմե Թորոսյանը (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա), բ.գ.թ. Մարիամ Ադամյանը (Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան), պ.գ.թ. Լիանա Գևորգյանը (ՀՊՄՀ Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն), բ.գ.թ. Ենոք Գրիշկյանը (ԵՊՀ), բ.գ.թ. Նարինե Մելքոնյանը (Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան):

Երկու մասնախմբերի նախագահներ Լալիկ Խաչատրյանը և Դավիթ Գյուրջինյանը օրվա վերջում ամփոփեցին գիտաժողովի արդյունքները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները»

➢1 մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Վիտալի Ռուբցովի խոսքը: Վերջինս խոսեց մանկավարժական կադրերի պատրաստման, նոր մեթոդների, կրթության անհատականացման, իրենց համալսարանի հետազոտական աշխատանքների մասին և վերոհիշյալ հարցերի շուրջ ՀՊՄՀ-ի հետ համատեղ քննարկումների մասին:

«Վստահ եմ՝ այսօրվա գիտաժողովի ընթացքում կքննարկվեն սուր հարցադրումներ, որոնք վերաբերում են այն մարդկանց, ովքեր ուսուցանում են, դաստիարակում, զարգացնում»,-ամփոփեց Վիտալի Ռուբցովը:

Էդուարդ Ղազարյանը զեկուցման թեման ընտրել էր ըստ բազմապրոֆիլ լսարանի: Նրա «Ֆիզիկան և համաչափությունը» զեկուցումը մեծ ոգևորություն առաջացրեց դահլիճում:

Նա ներկայացրեց՝ համաչափությունը դրսևորվում է ամենուր, խոսեց այն մասին, թե ինչ դեր է խաղացել համաչափությունը ֆիզիկայի ոլորտում, այդ տեսանկյունից պատմական ակնարկ արեց՝ ինչպես էին անցյալում հասկանում այդ համաչափությունը: Համաչափությունը գեղեցկությունն է, բնությունն արվեստի մի թանգարան է: Խոսեց համաչափական պատկերների մասին, համաչափության դրսևորումներին անդրադարձավ բնության մեջ, արվեստում, համաչափությունը ներկայացրեց որպես որոշ երկրաչափական ձևափոխությունների նկատմամբ պատկերների անփոփոխություն:

«Ամբողջը կապվում է համաչափության հետ՝ վերականգնելով գեղեցկությունը»,-նշեց զեկուցողը, միաժամանակ ներկայացնելով տարածական-ժամանակային համաչափության սկզբունքը և պահպանման օրենքները, նաև համաչափությունը ֆիզիկայի խնդիրներում:

Ամփոփելով խոսքը՝ նա ասաց. «Բնությունն իսկապես գեղեցիկ է, մի ամբողջ թանգարան է, ֆիզիկան նույնպես թանգարան է, որը միշտ զարգացել է, ինտուիցիայի շնորհիվ, թե տվյալ երևույթը ինչից է կախված»:

Հնչեցին ամենատարբեր հարցեր՝ ուղղված զեկուցողին. իրավական կարգավորման հարցում կարո՞ղ ենք հասնել համաչափության (Ռուզան Հակոբյան, Գավառի պետական համալսարան), պրոֆեսոր Համլետ Միքայելյանն էլ հավելեց՝ հանրակրթության մեջ համաչափության դերը նսեմացված է:

Քննարկվող հարցերի շուրջ իր տեսակետներն արտահայտեց և հարցադրումներ արեց ՀՊԲՀ Քիմիայի ամբիոնի վարի, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիդա Սահակյանը: Նա կարևորեց ներկա հարթակը՝ մանկավարժական ոլորտում կուտակված խնդիրների բարձրացման համար՝ ասելով. «Մերօրյա մանկավարժությունը հեռացել է տրամաբանական մտածողություն ձևավորելուց» :

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանն առաջարկեց բոլոր հարցադրումները բարձրաձայնել մասնախմբերում. դրանք հիմք կհանդիսանան նոր լուծումների:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Պարտադիր վերապատրաստման դասընթացի մեկնարկը տրված է

Նոյեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 1-ը Մանկավարժական համալսարանում պարտադիր վերապատրաստման դասընթացներին կմասնակցի նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ)-ի 70 մանկավարժ: 20-օրյա ժամկետում (ընդամենը 110 ժամ) դասընթացները նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին կտան անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ:

Նոյեմբերի 6-ին Մանկավարժական համալսարանում մեկնարկեց վերապատրաստման դասընթացը: Վերապատրաստվողներին ողջունեցին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը: Վերջինս ողջունեց ՆՈՒՀ-ի մանկավարժներին Մանկավարժականում՝ պարտադիր վերապատրաստման դասընթացի շրջանակներում, և հույս հայտնեց, որ նրանք բուհից կհեռանան նոր, լիարժեք գիտելիքներով և ձևավորված կարողություններով:

Համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը համալսարանի անձնակազմի անունից շնորհակալություն հայտնեց նախադպրոցական ոլորտի մանկավարժներին մեր բուհի վերապատրատումներին նախապատվությունը տալու համար, ինչը շատ պարտավորեցնող է:

«Այն վերապատրաստման դասընթացները, որտեղ ձևավորվում են ժամանակակից պահանջները, մասնագիտական, մանկավարժական, դաստիարակչական, աշխարհայացքի ձևավորման, տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը, հնարավորինս կբավարարի այն շրջանակը, որի անհրաժեշտ գիտելիքի բաղադրիչը լրացնելու խնդրով պայմանավորված, դուք եկել եք Մանկավարժական համալսարան»,- ասաց ռեկտորը: Ինքն էլ նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի շրջանավարտ է, թեև ավելի ուշ հակվել է դեպի հոգեբանական գիտությունը, խոստովանում է՝ սա իր համար հոգեհարազատ մասնագիտություն է: Լինելով սոցիալական հոգեբան՝ շատ կարևորում է նախադպրոցական մանկավարժական գործունեության ընթացքում սոցիալական այն խնդիրների մեխանիզմների իմացությունը, որով հաճախ պայմանավորված է այդ աշխատանքի արդյունավետությունը:

Ռեկտորն իր առաջ դրած համար մեկ խնդիրը ներկայացրեց վերապատրաստվողներին. «Ինչքանո՞վ են մեծերը ճանաչում փոքրերի տիրույթը, որքանո՞վ է փոփոխված մանկության սուբյեկտի տիրույթը ճանաչելի մեծի համար, որը կարծես իր պատասխանատվությունը ինչ-որ առումով չի գիտակցում կամ թողել է ինքնաբավ վիճակում»: Նա վիճակագրական փաստեր բերեց՝ սրընթաց փոփոխությունների հոգեֆիզիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական ազդեցությունները երեխայի վրա, ապա արձանագրեց՝ կան որոշակի խնդիրներ, որոնց ներքո մենք պետք է կառուցենք կամ վերակառուցենք մեր այն մեթոդական իմացությունը, որի ներքո գործում է երեխան:

Սրբուհի Գևորգյանը մեջբերեց ամերիկյան հոգեբանների ասոցիացիայի զգուշացումը, որ մինչև 6 տարեկան երեխաներին արգելվում է օգտվել տեղեկատվական ցանկացած տեխնոլոգիաներից, իսկ 6-տարեկանից բարձր երեխաներին՝ 20 րոպե՝ զարգացման հմտություններով պայմանավորված: Ռեկտորը կարևորեց ծնողների և մանկավարժների կենդանի շփումները երեխաների հետ:

Նա խոսեց երեխայի կլիպային մտածողության, էկրանային կախվածության, հոգենյարդային փոփոխությունների, ներառական խնդիրների ավելացման ու սոցիալական վարքագծի մասին՝ ընդգծելով, որ հիմնվելով պաշտոնական թվերի և փաստերի վրա՝ խնդիրները մեծացել են 54,6 %-ով:

Ամփոփելով՝ Սրբուհի Գևորգյանն ընդգծեց. « Մենք պիտի ամեն օր հասկանանք՝ ով է մեր ժամանակակից մանկության սուբյեկտը, զարգացման ինչպիսի ծրագրեր պիտի առաջարկենք և հետևենք ու դրա ներքո կարողանանք բավարարել մեծացող երեխայի սոցիալականացման այն գրագետ գործընթացը, որի արդյունքում մենք ունենալու ենք վաղվա մեր ապագայի լավագույն սերունդը»:

Գիտաուսումնական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը վստահեցրեց, որ 2012 թվականից սկսված տարբեր ուղղություններով պարտադիր վերապատրաստումները կարևոր են բուհի համար, և որ գործընթացը հնարավորություն կտա լավարկելու վերապատրաստվողների մասնագիտական կարողություններն ու հմտությունները:

Ի դեպ, հավելենք՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժների համար առաջին անգամ է թույլատրվել վերապատրաստումներ կազմակերպել:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում ուսանողների հետ

Մանկավարժական համալսարանում կազմակերպվել էր հանդիպում ուսանողների հետ: Ուսանողական խորհրդի նախաձեռնությանը ներկա էին նաև Արցախից բռնի տեղահանված և աբովյանականների շարքերը համալրած ուսանողները:

«Ես հաղթանակած սերնդի ներկայացուցիչ եմ, այնինչ վերջին դեպքերը ստիպեցին բոլորիս դժվար ճանապարհ անցնել: Նման իրողությունները ստիպում են ևս մեկ անգամ ուսումնասիրել պատմությունը, դասեր քաղել դրանից, չհուսահատվել և չտխրել: Վստահ եմ՝ միասին այնքան ուժեղ կլինենք, որ կկարողանանք հաղթահարել դժվարությունները՝ կերտելով բոլորիս համար բաղձալի ապագա»,- ողջունելով ուսանողներին՝ ասաց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Նա ընդգծեց՝ ուսանողներն ընտրել են ամենակարևոր մասնագիտությունը և կստանան բավարար գիտելիքներ, ձեռք կբերեն կարողություններ ու հմտություններ, կդառնան որակյալ մասնագետներ՝ դաստիարակելով ապագայի և հայրենիքի համար արժանի սերունդ:

ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը վստահեցրեց՝ ուսանողական կառույցն արդեն 30 տարի ուսանողի կողքին է. արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, քննարկում ուսանողների խնդիրները, դիմումներն ու առաջարկները՝ ներկայացնելով ՀՊՄՀ ղեկավար կազմին:

Պարույր Գալստյանը նկատեց՝ մեկ հանդիպման ընթացքում դժվար է ծանոթացնել 100-ամյա բուհին, սակայն պատրաստ են ներկայացնել մանկավարժական դարբնոցը, որի կենտրոնում եղել և մնում է ուսանողը:

Ուսանողները ծանոթացան բուհի կառուցվածքին, միջազգային կապերին, պաշտոնական լրատվամիջոցներին: Ուսանողական խորհրդի նախագահը ներկայացրեց նաև սոցիալական, ինտելեկտուալ և ուսանողական ծրագրերը: Վստահեցրեց՝ դրանք ստեղծման օրից լայն հնարավորություն են ընձեռում ուսանողին. կրթական բաղադրիչից զատ, նաև ժամանցային են:

«Լավագույն ուսանող», «Ամառային դպրոց», «Ձմեռային հանգիստ». Պարույր Գալստյանը թվարկեց այս և այլ ծրագրեր ու տեղեկացրեց, որ բուհերի շրջանում իրենց ձևաչափով տարբերվող ծրագրերին կարող են մասնակցել բարձր առաջադիմությամբ, ակտիվությամբ աչքի ընկնող բոլոր ուսանողները:

Նա հույս հայտնեց, որ հանդիպումը տեղեկատվական առումով արդյունավետ էր և հորդորեց ուսանողներին հնարավորինս ակտիվ լինել և ներգրավվել տարատեսակ ծրագրերում:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Մանկավարժականում է Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի պատվիրակությունը

Մեկշաբաթյա այցով Մանկավարժական համալսարանում է Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի 8 ուսանող: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի պրոֆեսորադասախոսական կազմի հետ կազմակերպված հանդիպմանը դեկանի՝ գիտության և միջազգային համագործակցության հարցերով տեղակալ Սոնա Մակիչյանը ողջունեց ռուս գործընկերների այցը բուհ և ներկայացրեց ֆակուլտետի ամբիոնները և նրանց ղեկավարներին:

«Վերջապես հնարավորություն ստեղծվեց նախօրոք պայմանավորված ծրագրերը կյանքի կոչելու»,-ասաց Սոնա Մակիչյանը:

Քննարկվեց առաջիկա հանդիպումների ծրագիրը: Սոնա Մակիչյանը փաստեց, որ երկու համալսարանների միջև վաղուց համագործակցային սերտ կապեր են ստեղծվել և իրականացվում է տարաբնույթ ձեռնարկներով:

ՀՊՄՀ միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոն ղեկավարի տեղակալ Աննա Հախումյանը ևս ներկայացրեց երկու համալսարանների միջև իրականացվող ծրագրերը՝ վստահեցնելով, որ այս հանդիպումը ևս հագեցած կլինի տարաբնույթ ձեռնարկներով:

Այս անգամ ռուս ուսանողները բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի տարբեր մասնագիտությունների և կուրսերի ուսանողներ են՝ դաստիարակության հոգեբանություն, զարգացման հոգեբանություն, սկզբնական կրթություն: Նրանց ուղեկցող ռուս գործընկերների հետ ակտիվ երկխոսություն է ծավալվում կրկնակի դիպլոմների հնարավորության շուրջ:

Պատվիրակության կազմում են Լ. Ֆ. Օբուխովայի անվան զարգացման հոգեբանության ամբիոնի վարիչ Իրինա Շապովալենկոն, պրոֆեսոր Վ. Ա. Գուրուժապովայի անվան կրթության հոգեբանության ամբիոնի ավագ դասախոս Իրինա Եմելյանովան և Միջազգային կապերի բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանը: Իրինա Եմելյանովան նկատում է՝ համագործակցելու եզրերն արդեն նկատելի են, մնում է արդյունավետ աշխատել:

Առաջին օրը ռուս պատվիրակությունն այցելեց Մանկավարժական համալսարանի տարբեր ստորաբաժանումներ, այդ թվում՝ ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարան, որտեղ ներկա գտնվեց «Զարգացնող խաղեր նախադպրոցական տարիքի երեխաների համար» դասընթացին՝ ծանոթանալով Հոգեբանության ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի նախկին շրջանավարտ, իսկ այսօր արդեն ուսուցիչ Մանուշակ Մուրադյանի կիրառած մեթոդներին:

Առաջիկա օրերը ևս հագեցած կլինեն ուսանելի հանդիպումներով բուհի տարբեր ստորաբաժանումներում, այդ թվում՝ նաև «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքային կոլեկտիվի հետ, հանդիպում համալսարանի պատմության թանգարանում:

Տարբեր ամբիոններում ռուսական կողմի ներկայացուցիչները կքննարկեն «Զարգացման հոգեբանություն» համատեղ մագիստրոսական ծրագրի մշակման աշխատանքների մանրամասները, կրկնակի դիպլոմների հնարավորությունները, կլինեն նաև բաց դասախոսություններ, կամբողջացվի հետագա համագործակցության փաթեթը:

Բաց դասախոսություն

Նոյեմբերի 8-ին Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համար «Զարգացման հոգեբանության արդի հիմնախնդիրները» (Լ. Ֆ. Օբուխովայի անվան Զարգացման հոգեբանության ամբիոնում իրականացված հետազոտական աշխատանքների օրինակով) բաց դասախոսությամբ հանդես եկավ Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության ֆակուլտետի Լ. Ն. Օբուխովայի անվան Զարգացման հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Իրինա Վլադիմիրի Շապովալենկոն:

Մինչ դասախոսությանն անցնելը՝ Ի. Շապովալենկոն խոսեց երկու համալսարանների սերտ համագործակցության մասին և հույս հայտնեց, որ այդ համագործակցությունն առաջիկայում ևս կշարունակվի տարբեր ուղղություններով:

Հղում անելով նշանավոր հոգեբան Լ. Խ. Վիգոտսկու հոգեբանական հայեցակարգերին, նաև ներկայացնելով Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության ֆակուլտետի Զարգացման հոգեբանության ամբիոնի հիմնադիր Լ. Օբուխովայի դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները՝ զեկուցողն անդրադարձավ զարգացմանը հոգեբանությանը որպես գիտություն, հանգամանորեն խոսեց զարգացման հոգեբանության ընթացքի մասին՝ պատմամշակութային, հասարակական զարգացումների ազդեցությամբ փոփոխությունների ենթարկվելու համատեքստում, փաստելով, որ այդ գործընթացը երբեք չի ընդհատվում:

Իրինա Շապովալենկոն ներկայացրեց մի շարք տեսական հարցեր ու հիմնախնդիրներ, որոնք ժամանակակից աշխարհում հրատապ լուծման կարիք ունեն: «Ժամանակակից աշխարհում անհրաժեշտ է դարձել զարգացման հոգեբանությունն ուսումնասիրել բոլոր տարիքների համար, մարդու զարգացման բոլոր փուլերում՝ նախադպրոցական տարիքի երեխայից մինչև մեծահասակ մարդը»,-ասաց զեկուցողը:

Իրինա Շապովալենկոն նաև ներկայացրեց իրենց ամբիոնի՝ տարբեր տարիների

կազմակերպած գիտապրակտիկ կոնֆերանսները՝ ընդգծելով հոգեբանական խնդիրների զարգացման շարժընթացը, նաև անդրադարձավ ամբիոնի դասավանդողների հրատարակած գրքերին, ուսումնամեթոդական ձեռնարկներին ու դասագրքերին, որոնք նաև կիրառական նշանակությամբ ու բովանդակությամբ երեխաների հոգեկան առողջությանը միտված խնդիրներ են շոշափում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Պրոֆեսիոնալիզմ՝ հայրենիքի սիրով շաղախված

Ռեկտորատի սրահում նոյեմբերի 3-ին բացվեց Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության և գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Սևադայի «Հայաստան՝ Ավետյաց երկիր» խորագրով ստեղծագործությունների ցուցահանդեսը: Դրանք գեղարվեստական լուսանկարչական գործեր էին, ուր լուսանկարչի տաղանդավոր աչքը որսացել



էր ճիշտ պահերն ու անմահացրել մեր հայրենիքի զարմանահրաշ գեղեցկությունը: Լուսանկարներն աչքի էին ընկնում գույների ընտրությամբ ու ասելիքի խորությամբ: Ահա «Հաղպա», «Ապարանի լի», «Շուշվա ձորը», «Լույս Ղարաբ», «Հաց են բերում», «Ճամբարակ», «Արագածի լանջին», «Դաշտի արևային սերենադը», Արարատ սարը կաթնագույն մշուշի մեջ...

Լուսանկարներն ավելի քան խոսուն են... Ուզում ես անընդհատ նայել ու զմայլվել Սամվել Սևադայի՝ լուսանկարելու հմտությամբ ու ճաշակով, ինչպես նաև Հայաստան աշխարհի չքնաղ տեսարանները մեծ վարպետությամբ «գաղտնազերծելու» շնորհով:

Ելույթ են ունենում ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, դեկան Գևորգ Թադևոսյանը, պրոֆեսոր Համլետ Միքայելյանը:

Ռեկտորը նկատում է. «Դինամիկ կյանքը ստատիկ իրավիճակներում պատկերելու, իրականության շունչն առանձին աշխատանքներում փոխանցելու հմտությունը մեծ շքեղություն են արվեստասերների, նաև ուսանողների համար, որոնք մասնագետի տեսակետից են դիտարկում կրթության շարժընթացը, կարողանում օբյեկտիվ գնահատական տալ իրականությանը, ունենում ապրումային և ապրումակցման դրսևորումներ»:

Սրբուհի Գևորգյանը տպավորված էր «Ես դեռ կվերադառնամ» գեղանկարչական աշխատանքով: Նրա կարծիքով «նկարի ստեղծումը պայմանավորված է պատմական իրադարձության վերաբերյալ հեղինակի ստեղծագործական, քաղաքական, մասնագիտական մոտեցումը ցուցաբերելու ցանկությամբ: Նկարի մեջ ընդգծված է տղայի վիշտը, թախիծը, ներքին տագնապները և վերադառնալու ըմբոստ ցանկությունը. տղայի հավաքական կերպարում առկա ուժը բնորոշում է հայ ազգին և Հայաստան աշխարհը: Այդ ուժը պիտի պահպանի մեր ինքնությունը, պատմական արժանապատվությունը, այս աշխարհում տեղն ու դիրքը»:

«Սամվել Սևադան՝ որպես հայ մշակույթն առաջ տանող անհատականություն, ոչ միայն հաստատել է իր ուրույն տեղը հայ գեղարվեստական լուսանկարչության ասպարեզում, այլև շարունակում է այն փառավոր ավանդույթը, որը ձևավորվել է Կուլտուրայի ֆակուլտետում, և որով մշտապես հպարտացել է մեր համալսարանը»,-ասում է դեկան Գևորգ Թադևոսյանը:

Սամվել Սևադա քաղաքացուն, բանաստեղծին, գեղանկարչին, լուսանկարչին և մտավորականին է ներկայացնում պրոֆեսոր Համլետ Միքայելյանը:

«Սևադայի նկարները մեծ արժեք են, իսկ նրա հիմնական մտահոգությունը՝ հասարակության բարոյական հենքն է հասարակության մեջ»:

Ցուցադրության մեջ տեղ գտած միակ գեղանկարչական աշխատանքը պրոֆեսոր Համլետ Միքայելյանը համարեց բարոյական հասունության գագաթ:

Սամվել Սևադան սիրահարված է հայկական լեռնաշխարհին: Հայաստանի տարբեր վայրերում ներկայացնում է իր անհատական ցուցահանդեսները, և հոգ չէ՝ ինչպես կկազմակերպվի և քանի մարդ կնայի: Եթե անգամ 20-25 մարդու վրա տպավորություն թողնեն իր աշխատանքները, դա արդեն լավ է: Պատրաստվում է հունվարի վերջին իր և ուսանողների գործերից մի քանիսը տանել ԱՄՆ-ում կազմակերպվելիք ցուցահանդեսին:

Ներկաները դիտեցին Սամվել Սևադայի ցուցահանդեսի նկարները, որ պրոֆեսիոնալիզմի ցայտուն արտահայտություններ էին՝ հայրենիքի սիրով շաղախված, գեղեցիկ ու տպավորիչ, պատկերների ընդգծված խորությամբ ու գույների՝ իրար չկրկնող նրբերանգներով :

Միլվա ԱՍՐՅԱՆ

Մասնակցեցին միջազգային «Աշնանային դպրոցին»

Մանկավարժական համալսարանի 5 ուսանող հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 5-ը Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանում մասնակցեց «Հոգեբանական գիտելիքի ճակատներ» միջազգային աշնանային դպրոցին:

Մոսկվայում անցկացրած մեկ շաբաթը գերհագեցած էր կրթամշակութային տարբեր բնագավառներում միջոցառումներով և այցերով:

«ՀՊՄՀ-ի և Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ անցկացվող միջազգային գիտական դպրոցները խորհրդանշում են երկու կառույցների համագործակցությունը և գործընկերության անբաժան մաս են կազմում: Նախորդ տարիների փորձը, Հայաստանի և Ռուսաստանի ուսանողների դրական արձագանքները ցույց են տալիս, որ նման դպրոցները մեծ արժեք ունեն մասնակիցների համար: Երկու բուհերի միջև ամենամյա ուսանողական ծրագրերը թույլ են տալիս փոխանակել կուտակած լավագույն փորձը»,- աբովյանականներին ողջունելով՝ նշեց Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի Միջազգային կապերի բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանն ու հավելեց, որ ուրախ են չորս տարի անց կրկին հանդիպել ծրագրի շրջանակում, որը կասեցվել էր հայտնի պատճառներով:

Աշնանային դպրոցի շրջանակներում Մանկավարժականի ուսանողները եղան Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանում, ծանոթացան բուհի կազմում գործող մի շարք կառույցների և բաժինների գործունեությանը:

Նրանք այցելեցին «Ռուբլևո» ուսանողական կենտրոն, եղան նյարդաճանաչողական հետազոտություններ գիտակրթական, ուսուցիչներին աջակցող գիտամեթոդական, աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաներին համապարփակ աջակցության կազմակերպման դաշնային ռեսուրս-կենտրոններում, փորձարարական հոգեբանության ինստիտուտում և այլն:

Ուսանողները մասնակցեցին նաև բուհի առաջատար դասախոսների դասախոսություններին՝ «Կամավորությունը որպես քաղաքացիական հասարակության զարգացման գործոն», «Սուիցիդալ վարքագծի հոգեբանություն» թեմաներով, ինչպես նաև՝ «Սոցիալ-մշակութային ուսուցման ներածություն» թեմայով դասընթացին և «Միջմշակութային հաղորդակցություն» թեմայով աշխատաժողովին:

Այցի շրջանակներում ՀՊՄՀ ուսանողները ներկա գտնվեցին «Մենթորությունը մանկավարժական և գիտական գործունեությունում. հետազոտություններ և պրակտիկա» խորագրով միջազգային գիտագործնական համաժողովի շրջանակում կազմակերպված «Մենթորի դերը երիտասարդ հետազոտողի մասնագիտական զարգացման գործում» կլոր սեղանին: Ի դեպ, համաժողովին առցանց մասնակցում էր նաև ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Կրթական հարուստ ծրագրից բացի, դպրոցի մասնակիցներն ունեցան նաև մշակութային այցեր. վայելեցին զբոսանքը Մոսկվայի պատմական վայրերում, այցելեցին Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիա, եղան մի շարք թատրոններում:

ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի մագիստրոս Տաթևիկ Հարությունյանը տպավորված է վերադարձել միջազգային աշնանային դպրոցից: Այցը կարևորում է նաև գիտելիքներ ձեռքբերելու, մասնագիտական աճի տեսանկյունից. առաձնակի ուշադրություն է գրավել աուտիկ սպեկտրի երեխաների համար նախատեսված դպրոցը, որի հիմնական նպատակը երեխաների ադապտացումն է կյանքին, իսկ որոշ դեպքերում նաև սեփական կարիքները հոգալ սովորեցնելը:

Տաթևիկ Հարությունյանը մեզ հետ զրույցում նշեց, որ կուզեր Մանկավարժականում ևս ուսանողների համար լիներ հանգստի և արտահամալսարանական աշխատանքների համար նախատեսված հատված, ինչպես նաև հոգեբանական աջակցություն ստանալու հնարավորություն՝ ինչպես Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանում:

Աշնանային դպրոցի պաշտոնական փակմանը Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի Միջազգային կապերի բաժնի ղեկավար Շուշանիկ Ուսուբյանը շնորհավորեց Մանկավարժականի ուսանողներին ծրագրին մասնակցելու համար և նրանց հանձնեց վկայականներ:

«12 տարիների սերտ և բեղմնավոր համագործակցության ընթացքում իրականացված «Հոգեբանական գիտելիքի ճակատներ» աշնանային դպրոցը ՌԴ-ում ակադեմիական փոխանակման 7-րդ ծրագիրն է և իրականացվել է ՀՊՄՀ-ի դասախոսական կազմի և ուսանողների հետ համատեղ: Մենք բարձր ենք գնահատում հոգեբանության և մանկավարժության ոլորտներում գիտելիքների ընդլայնման հնարավորությունները և ուրախ ենք, որ հետագայում կկարողանանք դրանք կիրառել նաև պրակտիկայում»,-նշեց Շուշանիկ Ուսուբյանն ու հույս հայտնեց, որ ավանդույթը կշարունակվի առաջիկա տարիներին ևս՝ նպաստելով երկու բուհերի միջև գիտելիքների և լավագույն փորձի փոխանակմանը:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

«Մանկավարժական այն համալսարանն է, որին պետք է նվիրվեն»

Նոյեմբերի 5-ին, 87 տարեկան հասակում, կյանքից հեռացավ Մանկավարժական համալսարանի նախկին ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բաղդասարյանը:
Ստորև ներկայացնում ենք Մանկավարժական համալսարանի 90-ամյակի առթիվ «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթում տպագրված նրա հետ հարցազրույցը:

Գևորգ Երվանդի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՀՊՄՀ ռեկտոր 1994-1998 թթ.
ԵՊՀ Մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, ՀՊՄՀ դասախոս

-Պարո՛ն Բաղդասարյան, Ձեր պաշտոնավարման տարիները համընկան հանրապետության համար դժվար ժամանակաշրջանի. ինչպիսի՞ գործունեություն ծավալեցիք դժվարությունների մեջ հայտնված բուհում...

-Ցավոք, իմ պաշտոնավարման տարիները համընկան այն տարիներին, երբ սարսափելի ֆինանսական-տնտեսական վիճակում էր հայտնվել մեր հանրապետությունը, և մեր համալսարանը բացարձակապես ոչինչ չուներ գոյատևելու համար, ֆինանսական ոչ մի աղբյուր չունեինք, վճարովի ուսանողներ չունեինք, պետության կողմից չնչին գումարներ էինք ստանում, որով հնարավոր չէր հոգալ բուհի կարիքները: Սանիտարական վատ պայմաններ, գրենական միջոցների բացակայություն, անգամ կավիճ չունեինք. մի սարսափելի վիճակ էր… Մենք փորձեցինք վճարովի ուսանողներ ընդունել. դա 1990-ականների սկիզբն էր... Մեծ ջանքերի շնորհիվ մենք կարողացանք վճարովի ուսանողների քանակ ապահովել և այդ վճարների հաշվին կարողացանք բուհի վիճակը մի քիչ բարելավել...Վճարովի ուսուցման գումարների հաշվին մենք կարողացանք նույնսկ բարձրացնել դասախոսների աշխատավարձերը: Բուհի վիճակը մի փոքր կարգավորեցինք և ձեռնամուխ եղանք նոր ֆակուլտետների, բաժինների և ծրագրերի ստեղծմանը:

Առանձնացրինք Հոգեբանության ֆակուլտետը, որը շատ կարևոր քայլ էր: Իմ պաշտոնավարման տարիներին մեծ ուշադրություն էր դարձվում Դեֆեկտոլոգիայի ֆակուլտետին:

Այնպիսի ժամանակաշրջան էր, որ անհրաժեշտ էր օգնել Ղարաբաղին, և մենք որոշակի միջոցներ հատկացրինք Ղարաբաղի համալսարանին, նաև մեր ուսանողները մշակութային ծրագրերով պարբերաբար հանդես էին գալիս այնտեղ. ադրբեջանական բայաթիների փոխարեն այնտեղ հնչեցին Կոմիտասի ու Եկմալյանի ստեղծագործությունները:

-Նոր կադրերի, ուսումնական ծրագրերի ու պլանների ստեղծման կարիք կար...

-Այո, մեծ դժվարություններ հաղթահարելով, մենք աստիճանաբար ուսումնական պրոցեսը դրեցինք նորմալ հունի վրա: Առանձնապես մեծ դժվարություններ ունեինք պրակտիկայի կազմակերպման հարցում, «կործանված» վիճակում էր Աղավնաձորի ուսումնամարզական բազան, և մեր կարևոր գործերից մեկն այդ բազայի վերականգնումն էր, որտեղ կազմակերպվում էին ուսանողների պրակտիկան և դասախոսների հանգիստը:

-Բուհի 6 մասնաշենքերն էլ կայի՞ն այդ տարիներին:

-Բոլորն էլ կային, դեռ մի բան էլ ավելի: Բուհի գլխավոր շենքը, որտեղ ռեկտորատն էր, ուզում էին վերցնել մեզանից, ես պայքարեցի և թույլ չտվեցի, բայց, այնուամենայնիվ, հետագայում բուհը կորցրեց այդ մասնաշենքը , որը Խանջյան փողոցի վրա էր, Վերնիսաժի հարևանությամբ:

-Կարելի է ասել բուհը գրեթե թոթափեց ծանր վիճակը և անցավ ակտիվ գործունեության...

-Այո, ծանր ժամանակներ էին, մենք ոչ մի գումար չունեինք բանկերում, միայն պարտքեր ունեինք: Չունեինք էլեկտրական հոսանք, հատուկ ժամով էին մեզ լույս տալիս, այն էլ հարևանները գողանում էին, և դժվար էր նրանց դեմն առնել... Եվ կարծես թե թոթափեցինք այդ ամենը, ու եկավ գեղեցիկ գործերի ժամանակը:

-Դուք թվարկեցիք այն դժվարությունները, որոնք բաժին ընկան Ձեր ղեկավարման ընթացքում: Ձեր գործունեության մեջ ի՞նչը հատկապես կառանձնացնեք:

-Նոր մասնագիտությունները Կուլտուրայի, Գեղարվեստի, Դեֆեկտոլոգիայիֆակուլտետներում… Հիմա դժվարանում եմ ամեն ինչ հիշել:

-Որպես գիտության, կրթության ոլորտի նվիրյալ մարդ՝ ըստ Ձեզ ինչպիսին պիտի լինեն այսօրվա ուսուցիչն ու դասախոսը:

-Այն, որ մարդիկ, ովքեր որոշել են դառնալ ուսուցիչ, պետք է անմնացորդ նվիրումով անեն այդ գործը: Ուսուցանող ու դաստիարակող մարդիկ, ես մեղմ եմ ասում, եթե չունենան համապատասխան մակարդակ, ոչ մի գիտելիք ոչ նրանց և ոչ էլ հասարակությանը չի փրկի: Նրանք պետք է լինեն համակողմանի զարգացվածությամբ և էթիկայով օժտված մարդիկ: Այդպես միշտ է եղել: Սակայն եկավ մի ժամանակ, երբ այդ գաղափարները ձևափոխվեցին, միակ խնդիրը գոյատևման պայքարը եղավ, և դա շարունակվեց մինչև այսօր: Ահա ինչու ունենք այն, ինչ ունենք:

-Ինչպիսի՞ն է այսօրվա ուսանողությունը:

-Պետք է ասեմ, որ այսօրվա ուսանողները չեն զիջում նախորդներին, ավելին, համընդհանուր զարգացման տեսանկյունից բավականին առաջ են անցել…

Աշակերտը, գնալով դպրոց, պետք է մտածի միայն սովորելու մասին... Գիտության և կրթության կառավարման միջազգային բոլոր փորձերի արդյունքը պետք է լինի՝ ինչ սովորեցնել երեխային... Հետագայում, երբ ձևավորված անհատ կդառնա, ինքը կորոշի, մինչդեռ բոլորն այսօր ծնողների օգնությամբ դեռևս ցածր դասարաններում որոշում են՝ սա պետք է, իսկ սա՝ ոչ, հաշվի առնելով հետագայում ակնկալվող օգուտը…

-Ներկայացրեք մարդու Ձեր տեսակը:

-Նորմալ հայ մարդը պետք է լինի ազնիվ, մաքուր, գործին անմնացորդ նվիրվի, և որպեսզի ամպագոռգոռ բառեր չասեմ, իր հնարավորությունները ծառայեցնի իր ազգին ու ժողովդին:

-Ձեր կյանքի ամենալավ պահը, հանուն որի արժեր ապրել…

-Երբ աղջիկս ու տղաս պաշտպանեցին դոկտորական ատենախոսություններ: Իսկ ամենաուրախալի պահը, երբ հինգ ամիս առաջ ծնվեց աղջիկ թոռնուհիս: Ես շատ եմ սիրում աղջիկ, և գտնում եմ, որ ընտանիքի պահպանման հիմքը աղջիկն է:

-90-ամյակի առթիվ ի՞նչ բարեմաղթանքներ կհղեիք Մանկավարժական համալսարանի դասախոսներին և ուսանողներին:

-Իմ ռեկտորության տարիներին բուհի մեկ հոբելյան նշել ենք: Ուսանողներից սկսած մինչև դասախոսներ պիտի հպարտանան, որ սովորում ու աշխատում են այս բուհում, որովհետև այս բուհն ունի մի առաքելություն, որը բուհի ռազմավարության, մեր ժողովրդի պահպանման ու գոյատևման հիմքն է: Հետևաբար նրանց համար պարծանք պետք է լինի և հպարտություն: Մանկավարժական համալսարանն այն բուհն է, որին պետք է նվիրվեն, նրանով հպարտանան և աշխատեն, որ այստեղից դուրս եկողները նույն զգացողությունն ունենան:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Կամավորական օրերի տպավորություններով

Կամավորական գործունեության դերն ու իրական արժեքն սկսեցի կարևորել Մանկավարժական համալսարանում, իսկ խթան հանդիսացավ քառասունչորսօրյա պատերազմը, որի ընթացքում համատեղում էինք դասերն ու կամավորությունը և մեր փոքրիկ ներդրումով փորձում սատարել սահմանին կանգնած տղաներին:

Համալսարանում այս տարի ևս ձևավորվել էր կամավորական խումբ, որն օգնում էր Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին, սակայն ինձ վատ էի զգում, որ չէի կարողանում աշխատանքներ ծավալել հեռու մարզերում: Պատահաբար տեսա, որ Արարատի մարզում, որտեղ և ապրում եմ ես, բացվել է ժամանակավոր կացարան՝ նախատեսված Արցախից բռնի տեղահանված շուրջ 100 հոգու համար: Հենց այդ պահին որոշեցի դիմել և հաջորդ օրը գնացի կազմակերպիչների հետ ծանոթանալու: Ինձ դիմավորեցին մեծ ջերմությամբ, ու երբ առաջին անգամ մտա կացարան, չէի էլ մտածում, որ այդ իրար կողքի շարված մահճակալների արանքում այդքան դրական զգացողություններ են տարածվելու: Անցա աշխատանքի, սկսեցի նվազագույն քայլերն անել, և ամեն փոքրիկ քայլի համար մարդիկ շնորհակալություն էին հայտնում: Ծանոթացա կամավորների հետ, որոնցից գրեթե բոլորն, ի զարմանս ինձ, աշակերտներ էին: Լինելով համեմատաբար մեծ և ունենալով համապատասխան հմտություններ՝ ես դարձա կամավորական խմբի ավագ: Ամեն օր մեզ միանում էին նոր կամավորներ և, չնայած երբեմն առաջացող փոքրիկ խնդիրներին, այդ ընթացքում կարողացանք ձևավորել մի մեծ ընտանիք, որը կատարում էր այդ պահի ամենակարևոր աշխատանքներից մեկը: Այդ օրերին ամենաշատը հասկացա, որ տարաբաժանումներն անսահման սխալ են. չէ՞ որ բոլորս հայ ենք, իսկ հայրենիքը՝ մեկը:

Երբ դեռ նոր էի կացարանում, ինձ մոտեցավ Արաքսը՝ համարձակ ու նպատակասլաց փոքրիկ աղջիկ, ով շատ էր սիրում մայրենիի դասերը, նաև՝ լեզուների հանդեպ սեր ուներ: Եկավ, ծանոթացավ ու երբ իմացավ, որ ուսուցչուհի եմ՝ փայլուն աչուկներով նայեց ինձ ու զարմացած հայացքով ասաց, որ պուճուր դասատու կյանքում չի ունեցել և ուզում է, որ իր դասատուն լինեմ: Դրանից հետո ամեն առավոտ, երբ բացում էի կացարանի դուռը, վազելով գալիս գրկում էր, իսկ առաջին անգամ գրկելիս առաջ եկավ ու ասաց, որ եկել է ինձ «խտտի»… Դժվար չէր հասկանալ բառի իմաստը, երբ անմիջապես հետո շատ ամուր գրկեց ինձ: Ու դրանից հետո կացարանում ունեցածս բոլոր օրերը սկսվում էին Արաքսին ու մնացած փոքրիկներին «խտտելուց»:

Նույնքան պայծառ էր Արաքսի փոքրիկ եղբայրը՝ Աբելը, ով լինելով կացարանի ամենաչարաճճի փոքրիկը, վայելում էր բոլորի սերը, իսկ սոցիալական ցանցերում տարածված հոլովակներից հետո ուներ նաև երկրպագուներ, ովքեր պարբերաբար այցելում էին իրեն: Մինչ օրս մի բանում հստակ համոզված է՝ անպայման ետ է գնալու իր տուն:

Այդ մեկ ամիսն իմ կյանքում շատ բան փոխեց: Շուրջս մարդիկ էին, ովքեր կորցրել էին ամեն ինչ, բայց պահպանվում էր հավատը, հավատ, որ ամեն բան լավ է լինելու:

Ամենատպավորիչ բնակիչներից էր Էրիկը, ով կորցրել էր իր ողջ ընտանիքը դեռևս քառասունչորսօրյա պատերազմի ընթացքում, Հադրութից տեղափոխվել Ստեփանակերտ, իսկ այնտեղից՝ Արտաշատ: Բայց միկրոֆոնն իր անբաժան ընկերն էր ու հաճախ սկսում էր երգել, փոքրիկները պարում էին, իսկ այ մեծերն ու մենք՝ կամավորներս, խորասուզվում մտքերի օվկիանոսում ու մի կերպ զսպում արցունքները:

Օրերը սկզբում դժվար էին անցնում, բայց արի ու տես, որ մի քանի օրվա ընթացքում բոլորս իրար հարազատ դարձանք: Կամավորներին օգնում էին նաև բնակիչները, երեխաներն իրենց ամենատարբերվող տաղանդներն օգտագործելով հաճախ ովերներ էին պատրաստում կամավորների համար ու այդ պահին փոքրիկ քարերով թևնոցներն ու թղթի վրա նկարված ամենատարբեր նկարներն ամենաջերմ էմոցիաներն էին պարգևում, որոնք կրկին առաջանալու են, երբ նույնիսկ տարիներ հետո բացենք դարակն ու դրա մի թաքնված անկյունում գտնենք մեր ամենաթանկ նվերները: Հիշողությանս մեջ միշտ ու հաճելիորեն կպահպանվեն մեկ ամսում ունեցած իմ բոլոր զգացողություններն ու այդ օրերի ապրումները, մարդիկ, պահերը: Ու արի ու տես, որ դժվար ժամանակներում ենք գիտակցում ամենակարևոր բաները: Այն, որ ամենաարժեքավորը երբեմն ամենահասարակի մեջ է, որ ամենաջերմ օգնությունը երբեմն կարող է համարվել կողքի շենքի տատիկի թխած թարմ խմորեղենը, որը մեծ սիրով ուղարկում է կացարան: Որ երբեմն ամենամեծ վիշտն ամփոփվում է այն կնոջ ներսում, ով լուռ նստած բռնել է գլուխն ու խորասուզվել մտքերի մեջ, որ հաճախ փոքրիկների պարզ հարցերը կարող են մտածելու, իսկ երբեմն նույնիսկ թաքուն արտասվելու տեղիք տալ: Այդ հարյուրից ավելի մահճակալները, որոնք շարված էին իրար շատ մոտ, Արտաշատի մարզադպրոցի տարածքը վերածել էին ամենաջերմ ու իրական տան, որը թեկուզ և կարճ ժամանակով, բայց իր տանիքի տակ էր համախմբել մի խումբ լուսավոր մարդկանց:

Եվ քանի որ կացարանը չէր կարող երկար գործել, բոլոր բնակիչներին օգնեցինք տներ գտնել իրենց համար: Ու մինչ օրս էլ հաճախ այցելում ենք: Բայց բոլորիս սրտում էլ հավերժ դաջված կմնան կացարանի ներսում ունեցած պահերը:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրս
Շրջակա միջավայրի գիտություններ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՊՈԼԻՍ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՍԱՀԱԿ Բ. ՄԱՇԱԼԵԱՆԻ ՀՐԱՒԷՐՈՎ

Հոկտեմբերի 15-20-ը Պոլսոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տէր Սահակ Բ. Մաշալեանի հրաւէրով Սրբոց Թարգմանչաց տօնին եւ Մշակոյթի Շաբաթուան ընդառաջ Պոլիս այցելեցին Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտօնակատար, «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրէն Սուրէն Դանիելեանը, նոյն ամբիոնի դոցենտ եւ կենտրոնի գիտական աշխատող Քնարիկ Աբրահամեանը եւ Վանաձորի Յովհ. Թումանեանի անուան պետական համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան ամբիոնի դոցենտ Վալերի Փիլոյեանը: Առիթը 2022 թուականին ,Համազգայինե հայ կրթական եւ մշակութային միութեան եւ ՀՊՄՀ կազմակերպած «Պոլսահայ գրականութիւնը 20-րդ դարի կէսից մինչեւ մեր օրերը» գիտաժողովի նիւթերի ժողովածուի (լոյս տեսած 2023-ին, «Համազգային»-ի հովանաւորութեամբ) շնորհանդէսն էր:

Հոկտեմբերի 16-ին պատուիրակութեանն ընդունեց Պոլսոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տէր Սահակ Բ. Մաշալեանը: Հանդիպմանը ներկայ էր նաեւ Պատրիարքական Փոխանորդ Արժ. Տ. Գրիգոր Աւագ Քահանայ Տամատեանը: Հիւրերը շնորհակալութիւն յայտնեցին հրաւէրի համար եւ շահեկան զրոյց ունեցան հայերէնի, յատկապէս արեւմտահայերէնի եւ նրա գործածութեան ու ուսուցման մասին: Պատրիարք Հայրն իր հերթին ուրախութիւն յայտնեց հրաւէրին ընդառաջելու համար: Նա նկատեց, որ Մշակոյթի Շաբաթը պէտք է արժանաւորապէս նշել, որի համար էլ այս տարի հրաւիրել է գիտնականներին: Հիւրերը Հոգեւոր Պետին նուիրեցին իրենց հեղինակած գրքերից եւ ստացան նաեւ Պատրիարք Հօր եւ Պատրիարքութեան միաբանների հրատարակութիւններից:

Այնուհետեւ առաջնորդութեամբ Հոգշ. Տ. Յովակիմ Աբեղայ Սերովբեանի այցելեցին Աթոռի Կոլոտ Պատրիարքի անուան թանգարանը եւ տեղեկութիւններ ստացան ցուցադրուած հարուստ ժառանգութեան մասին:

Օրը շարունակուեց արդէն պոլսահայ գրականութեան նահապետ, «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռոպէր Հատտէճեանի հիւրընկալ յարկի տակ: Սուրէն Դանիելյանի հետ բարեկամութիւնը սկսուել է դեռ 1989-ից, երբ գիտնականն առաջին անգամ այցելեց Պոլիս: Վերջին երեք տարիներին, ինչպէս հաւաստում է թերթի աշխատակազմը, «ուխտի օրերի» են վերածուել խմբագրապետին այցելութիւնները: Այս անգամ հաճելի անակնկալը Հայաստանի գրագէտների մասնակցութիւնն էր: Ծաւալուեց հետաքրքրական զրոյց գրող-ուսուցչի եւ գրական մեկնաբան-աշակերտների միջեւ: Հանդիպմանը ներկայ էին գրողի որդիները, այսօր «Մարմարա»-ի երթը շարունակական պահող Արի եւ Այգ Հատտէճեանները, մտաւորական, ուղեգրական հատորների հեղինակ Արամ Գամպուրեանը, թերթի տասնեակ տարիների փոխխմբագիր Մաքրուհի Յակոբեանը, ներկայիս փոխխմբագիր Նաիրա Սիւզմէն, ասմունքի վարպետ Սիլվա Կոմիկեանը, մտաւորական Մարիամ Տրամէրեանը:

Յաջորդ օրը խումբը հիւրընկալուեց նաեւ «Մարմարա»-ի խմբագրատանը, ուր ծաւալուեց զրոյց հայ մամուլի պատմութեան, դիմագրաւած դժուարութիւնների եւ մարտահրաւէրների շուրջ:

Պատրիարքարանի պատրաստած հարուստ յայտագրի շրջանակներում մի քանի օր շարունակ հիւրերը հնարաւորութիւն ունեցան այցելելու պոլսահայ վարժարաններ՝ Կեդրոնական, Էսաեան, Սուրբ Խաչ Դպրեվանք եւ Սահակեան- Նունեան, աշակերտութեան առջեւ հանդէս եկան բանախօսութիւններով, լսեցին նրանց: Ի հա՛րկէ, դժուարին մարտահրաւէրների առջեւ են պոլսահայ համայնքը եւ դպրոցը. հայերէնը միայն դպրոցի լեզուն է, եւ հայկական եկեղեցիների հարեւանութեամբ, բառացիօրէն եկեղեցու բակում գտնուող դպրոցն է, որ կոչուած է լինելու հայապահպանութեան զարկերակը: Տնօրէնների եւ ուսուցչական կազմերի հետ հանդիպումներում, ինչպէս նաեւ Պատրիարք Հօր դիտարկումներում հայերէնի ուսուցման մէջ համայնքը աւելի յառաջացած կը լինէր, եթէ ունենայինք համալսարանական պատրաստութեամբ հայերէնաւանդ ուսուցիչներ: Իսկ այդպիսի քայլեր համայնքն առաջին հերթին ակնկալում է մայր հայրենիքից: Այս առիթով Սուրէն Դանիէլեանն ընդգծեց մանկավարժական համալսարանի ջանքերը, յատկապէս մագիստրոսական կրթութեան կազմակերպման ուղղութեամբ:

Հիւրերը այցելեցին նաեւ Սկիւտարի գերեզմանատուն, ուր թաղուած են հայոց գրականութեան ու դպրութեան երախտաւորները՝ Պետրոս Դուրեան, Մատթէոս Զարիֆեան, Ռեթէոս Պէրպէրեան, Յովհաննէս Հինդլեան եւ ուրիշներ, ուր գտնուում է ճարտարապետների յայտնի Պալեան գերդաստանի դամբարանը, եղան Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցի հարուստ ու բազմաբովանդակ թանգարանում, տեսան ամիրայական գերդաստանների ու պոլսական հոգեւոր ու աշխարհիկ նիստուկացի մասին պատմող ցուցադրութիւնը:

Իսկ ահա Հոկտեմբերի 18-ի ուշ երեկոյեան նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Հօր Ֆերիգիւղի «Շիրինօղլու» սրահում տեղի ունեցաւ «Պոլսահայ գրականութիւնը 20-րդ դարի կէսից մինչեւ մեր օրերը» ժողովածուի շնորհանդէսը: Միջոցառմանը ներկայ էր նաեւ Պոլսի Կաթողիկէ Վիճակաւոր Արհի. Տ. Լեւոն Արք. Զէքիեանը, վեղարաւոր հայրեր ու քահանաներ: Հանդիսութիւնը կազմակերպել էր Ուսուցչաց Հիմնարկը (ատենապետ Սարգիս Քիւլեկէչ): Հանդիսութիւնը վարում էր պոլսահայ ուսուցիչ-գրականագէտ Սեւան Տէյիրմենճեանը: Յայտագրին, բացի Երեւանից ժամանած բանախօսներից, մասնակցութիւն բերեցին ասմունքի վարպետ Սիլվա Կոմիկեանը, երգիչներ Գրիգոր Թերզեանը, Լիւսի Գահվեճիօղլուն, երաժիշտ Սիրուն Սիրունեանը: Հատորի ներկայացումից զատ՝ տրուեց նաեւ պոլսահայ նորագոյն շրջանի գրականութեան ամփոփ նկարագիրը՝ գրական շարժումներով, դէմքերի վկայակոչումով՝ Կարպիս Ճանճիկեան, Հայկազուն Գալուստեան, Զահրատ, Զարեհ Խրախունի, Ռոպէր Հատտէճեան, Իգնա Սարըասլան, Մկրտիչ Մարկոսեան եւ ուրիշներ, վաղուայ հեռանկարի շուրջ դիտարկումներով:

Տպաւորիչ էր Պատրիարք Հօր հուսկ բանքը՝ այն ընդգծումով, թէ «բախտաւոր ենք 17 վարժարանով, 3 հազար աշակերտով, 400 ուսուցիչներով, երկու հայ օրաթերթերով՝ «Մարմարա» եւ «Ժամանակ», երկլեզու շաբաթաթերթով՝ «Ակօս»: Շիտակ է, որ հայախօս բազմութիւնը փոքրամասնութեան մէջ փոքրամասնութիւն է, բայց կարեւոր չէ ատիկա, մենք տակաւին կ'ապրինք, ու հայերէնը մեր սրտին մէջ ու մեր լեզուի վրայ կենդանի է տակաւին»:

Ուրախութեամբ պիտի նշել, որ հանդիսականների մէջ բավական մեծ ներկայութիւն ունէին տարբեր տարիներին «Սփիւռք» կենտրոնի կազմակերպած սփիւռքահայ ուսուցիչների դասընթացների մասնակիցները:

Հոկտեմբերի 20-ին, այցի վերջին օրը, գրականագէտների խումբը շնորհակալութեան ու երախտագիտութեան զգացումներով հրաժեշտ տուեց Պատրիարք Հօրը՝ յոյս յայտնելով, որ յետագայում կը լինեն նմանօրինակ նոր արդիւնաւոր նախաձեռնութիւններ: Սուրէն Դանիէլեանն ընդգծեց, որ մանկավարժական համալսարանում հիւրընկալուել է նաեւ Պոլսոյ երջանկայիշատակ Պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանը: Այնպէս որ այսօր Ն.Ա. Տ. Սահակ Բ. Մաշալեանի խօսքին սպասում է ապագայ մանկավարժի մասնագիտութիւնն ընտրած հայրենի ուսանողութիւնը:

Ուշ երեկոյեան արդէն հայաստանցի գրագէտները տպաւորութիւններով ծանրաբեռ վերադարձան հայրենիք:

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

«Համագործակցային և նախագծային ուսուցման առանձնահատկությունները»

Մանկավարժական համալսարանում հանրակրթական դպրոցների ուսուցիչներ նոյեմբերի 11-12-ը մասնակցեցին «Համագործակցային և նախագծային ուսուցման առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստմանը: Այն անցկացվում էր Շվեյցարիայի Ցյուրիխի մանկավարժական համալսարանի հետ համագործակցության՝ «Ավելի լավ դասավանդում, ավելի պայծառ ապագայի համար» (Better Teaching for Better Future) ծրագրի շրջանակներում:

ՀՊՄՀ-ն Շվեյցարիայի Ցյուրիխի մանկավարժական համալսարանի հետ համագործակցում է շուրջ երկու տարի: BTBF ծրագրի շրջանակներում մշակվել են դասագիրք-ուղեցույցներ՝ ուսուցիչների, դասախոսների և ուսանողների վերապատրաստումների համար: Դրանք համահունչ են մեր երկրում տեղի ունեցող հանրակրթական ոլորտի բարեփոխումներին և նոր ներդրված չափորոշիչներին:

ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային հարցերով պրոռեկտեր Մարիաննա Հարությունյանը նկատում է՝ նախագծային ուսուցումն իբրև նոր երևույթ մի շարք հարցեր է առաջացնում ուսուցիչների շրջանում: Պրոռեկտորը հավելում է՝ վերապատրաստման թեմայի ընտրությունը պայմանավորված է վերջին շրջանի կրթական բարեփոխումներով: Ըստ այդմ, նախագծային ուսուցումը սահմանվում է իբրև սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունք. «Մանկավարժական համալսարանը, հավատարիմ ուսուցչի կողքին լինելու իր առաքելությանը, նախաձեռնել էր վերապատրաստումը՝ հնարավորինս պարզաբանելու ուսուցիչներին հուզող հարցերը, ուղղորդելու թեմաների ընտրության և նախագծի իրականացման հարցում»:

Մարիաննա Հարությունյանը լիահույս է, որ երկօրյա հանդիպումներից հետո ուսուցիչները, զինված նոր գիտելիքներով և հմտություններով, դասապրոցեսում կկիրառեն ծրագրի շրջանակում նախատեսված նախագիծը:

Նշենք, որ «Ավելի լավ դասավանդում, ավելի պայծառ ապագայի համար» (Better Teaching for Better Future) ծրագիրը շարունակական է. հաջորդ վերապատրաստումը կլինի նոյեմբերի 25-26-ին: Ծրագրի արդյունքները կամփոփվեն դեկտեմբերին:

Ծրագրի շրջանակներում կմեկնարկեն նաև նոր վերապատրաստումներ՝ նախատեսված դպրոցի տնօրենների համար:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Ցուցահանդես-մրցույթ՝ «Կենտրոն. Երևանը խոշորացույցի տակ»

Նոյեմբերի 1-ին Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թաղապետարանում տեղի ունեցավ «Կենտրոն. Երևանը խոշորացույցի տակ» խորագրով լուսանկարների ցուցահանդես-մրցույթ, որտեղ ներկայացված էին Երևանն ու երևանցիները: Իրենց աշխատանքներով հանդես եկան նաև ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի ուսանողները և շրջանավարտները (ամբիոնի վարիչ՝ Ռուբեն Երզինկյան):

Ցուցահանդես-մրցույթը գնահատում էր պրոֆեսիոնալ ժյուրին: Ցուցահանդես-մրցույթում 2-րդ, 3-րդ տեղերը ստացան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի գեղարվեստական լուսանկարչության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Նանե Ալեքսանյանը (կուրսի ղեկավար՝ Արմեն Խաչատրյան) և նույն ամբիոնի գեղարվեստական լուսանկարչության բաժնի շրջանավարտ Արամ Խաչատրյանը:

Սեմինարների շարք Գեղարվեստական կրթության ֆակուլտետում

Գեղարվեստական կրթության ֆակուլտետում անց է կացվում սեմինարների շարք՝ արվեստի և արվեստագիտության թեմաների շրջանակում: Նոյեմբերի 10-ին կայացավ երկրորդ սեմինարը՝ «Դեկորատիվ կիրառական արվեստի (գեղարվեստական գործվածքների) դասավանդման մեթոդները» թեմայով: Այն նախատեսված էր բակալավրիատի 3-4-րդ, մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի ուսանողների և ֆակուլտետի դասախոսների համար՝ բաց լսարան համատեքստում:

Սեմինարը վարում էր Անուշ Եղիազարյանը, ով հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման պատմության, այդ համատեքստում Հայաստանում ներկա իրավիճակի և դասավանդման մեթոդների մասին:

Հավելենք, որ առաջին սեմինարը հոկտեմբեր ամսին վարել էր գեղանկարիչ Լեմս Ներսիսյանը:

ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված թեմաներով սեմինարները ունկնդիրների համար արվեստի ոլորտի գիտելիքների հարստացման նոր ձևաչափով հետաքրքիր էին և ուսանելի:

Ճանաչողական բաց դաս՝ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտորներին

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի հայկական կիրակնօրյա «Վերածնունդ» դպրոցում ուսուցչական համակազմի նախաձեռնությամբ անցկացվեց ճանաչողական բաց դաս՝ նվիրված աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Արամ Խաչատրյանի 120-ամյակին և հայ կոմպոզիտոր, դաշնակահար, Խորհրդային Միության և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Առնո Բաբաջանյանի հիշատակի 40-ամյակին:

Հայկական երգի ուսուցչուհի Արփինե Սամվելյանը ներկայացրեց նրանց կյանքն ու գործունեությունը: Հատկանշական է, որ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններն ընդգրկվել են 20-րդ դարի դասական երաժշտության մեջ: Այս ամենն ուղեկցվեց դպրոցի աշակերտուհի Ռոբերտա Մկրտչյանի հիանալի կատարումով. հնչեց մեծն երգահանի դաշնամուրի համար գրված «Տոկկատան» (1932 թ.), ինչպես նաև վավերագրական ֆիլմերի ցուցադրությամբ, խոսվեց երկու մեծ վարպետների ընկերության և համագործակցության մասին:

Խոսելով «Գայանե» (1942 թ.) և «Սպարտակ» (1954 թ.) բալետների մասին՝ հայկական պարի ուսուցչուհի Նանե Մարգարյանը ներկայացրեց ազգային հայկական տարազները, որոնք մեր նախնիները կրել են տարբեր ծեսերի ժամանակ, ինչպես նաև բեմական հագուստների առանձնահատկությունները:

Հայրենագիտության ուսուցչուհի Քնարիկ Վարդանյանը պատմեց Առնո Բաբաջանյանի «Առաջին սիրո երգը», «Հարսնացուն հյուսիսից» կինոնկարների մասին, ցուցադրվեցին դրվագներ, իսկ աշակերտները դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանի «Հայկական երգերի ժողովածու» գրքից երգեցին այդ լեգենդար ֆիլմերի հայտնի երգերը:

Միջոցառումն ավարտվեց «Ազգ փառապանծ» երգի կատարումով, որը դպրոցի սաները երգեցին մեծ սիրով, ոգևորությամբ ու խանդավառությամբ:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ